իսկ չորրորդը եւ ամենաընտիր բանակը պիտի գնայ Նախիջեւանի վրայ, ուր խանը (նահանգապետը) 100 մարդ ունի եւ բոլոր քրիստոնեաների մահացու թշնամին է:

Նախիջեւանում բոլոր չորս բանակները միանալով, պիտի շարժուեն Երեւանի վրայ, որ պարսկական Հայաստանի գլխաւոր քաղաքն է եւ լաւ ամրացած: Այդտեղ նստում է նահանգապետը (սարդար), 200 մարդով: Քաղաքն ունի 30 թնդանօթ, բայց առանց ռումբի, որովհետեւ պարսիկները չգիտեն, թէ ի՛նչ բան է թնդանօթը. չգիտեն նաեւ նրա գործածութիւնը: Քաղաքն ամրացած է միմիայն պարիսպներով, առանց խրամատների, ուստի եւ թնդանօթները կարելի է քաշել մինչեւ պարիսպների տակը: Հնարաւոր է առանց մէկ հրազէն անգամ պարպելու գրաւել քաղաքը, որովհետեւ վառօդի եւ զէնքի պահեստները գտնւում են հայերի ձեռքին:

9. Երեւանին տիրելուց յետոյ՝ ամբողջ զօրքը արագօրէն պիտի շարժուի Թաւրիզի վրայ, որ շատ հարուստ եւ վաճառաշահ քաղաք է: Քաղաքին տէր դառնալով, հեշտութեամբ կարելի է 100,000 մարդ զինել եւ հագցնել նրա անբաւ հարստութիւններով: Թաւրիզից զօրքը պիտի գնայ Սօֆիան[1]) եւ այդտեղից էլ Տաճկաստանով վերադառնայ Երեւան:

10. Այս ամէնը դիւրին է անելը եւ պիտի կատարուի շատ արագ, ընդամէնը 20–25 օրուան ընթացքում:

11. Պարսիկները հայ-դաշնակից զօրքերի դէմ ոչինչ անել չեն կարող, որովհետեւ հայերը նախ՝ 24 ժամուան մէջ կարող են հանել 192,000 զօրք, չհաշուած վրացական 80 հազարանոց բանակը, որ սիրով կը տրամադրեն հայերին: Երկրորդ՝ կորցնելով Հայաստանն ու Վրաստանը, պարսիկները կարող են հանել ընդամէնը 20,000 մարդ, այն էլ հազիւ 7–8 ամսուան ընթացքում: Եւ վերջապէս երրորդ՝ պարսիկ զօրքը չափազանց անկանոն է — չունին հետեւակներ եւ իւրաքանչիւր կռուից յետոյ ամէնքը ցրւում են իրենց տները՝ առանց թոյլտուութեան: Դրա հետ միասին՝ նրանք նաեւ անընդունակ են բերդեր պաշարելու, եւ հնում, եթէ նրանք կռիւներ էին անում, հայերն էին նրանց համար բերդեր պաշարողները:

12. Տաճկաստանից էլ վախենալու բան չկայ, որովհետեւ նախ՝ տաճիկներն ու պարսիկները իրար բարեկամ չեն. երկրորդ՝ Ռուսաց Դաշնակցութիւնը տաճիկներին կը վստահացնի, որ պատերազմը իրենց դէմ չէ, այլ պարսիկների, եւ երրորդ՝ եթէ տաճիկները օգնեն պարսիկներին, ռուսները իսկոյն պատերազմ կը յայտարարեն տաճիկներին[2]):

6.

Ինչպէս տեսնում էք, բաւական ռոմանտիկ ու երազական է այդ ծրագիրը: Ամէն բան կատարւում է շատ դիւրին եւ արագ, կարծէք կախարդական գաւազանի հարուածով եւ միշտ հայերի օգտին: Թշնամին ոչնչութիւն է, իսկ հայերն ու իրենց մէկ բուռ դաշնակից եւրոպական զօրքը՝ ամենակարող: Ծամախուց մինչեւ Թաւրիզ, որ հնում կարելի էր, ամենայաջող դէպքում, 12-15 օրում անցնել, ապստամբներն անցնում են 20–25 օրում, այն էլ պատերազմելով, ճանապարհին մի շարք բերդեր ու քաղաքներ գրաւելով եւ մահմեդական ազգաբնակութիւնը զինաթափելով:

Ծրագրի գլխաւոր առանցքն է կազմում — ինչպէս յիշեցինք — այն միտքը, թէ Հայաստանի ազատութիւնը պիտի կատարուի Արեւմուտքի միջոցով, եւ Արեւմուտքն էլ, լցուած քրիստոնէական մարդասիրութեամբ դէպի քրիստոնեայ հայերը, անպայմանօրէն գործի գլուխ պիտի անցնի եւ նրանց փրկի մահմեդականների լծից:

Ա՛յն պայմաններում եւ ա՛յն ժամանակ այդպիսի մտածողութիւնը — մեր կարծիքով — միանգամայն բնական էր եւ հասկանալի, մի շարք պատճառներով: —

Ամենից առաջ՝ բոլոր թոյլ ազգերի — դեռ աւելի՝ բոլոր ամէն կարգի թոյլերի — հոգեբանութիւնն է դա՝ յոյսը միշտ ուրիշների վրայ դնել: Հայ ազգն եւս — տնտեսապէս քայքայուած, բարոյապէս ու մտաւորապէս ընկճուած եւ քաղաքականապէս յետին թշուառու-

1) Գիւղ եւ կայարան Թաւրիզ-Ջուլֆա երկաթուղագծի վրայ:

2) Եզեանց, «Պետրոս Մեծի Յարաբերութիւնները», փաստաթուղթ 9 եւ 10: